

[202235]



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«24» սեպտեմբերի 2016 թ.

N 95-ՆԿ/1

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 2-Ի N 51-Ա/1 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի մայիսի 2-ի «Սոցիալական ծառայություններ տրամադրելու գործընթացում կիրառվող համակարգչային ծրագրերով ուսուցման, սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններում աշխատողների համակարգչային ծրագրերով աշխատանքի լրացուցիչ թեմաները, պահանջները հաստատելու և նախապատրաստական աշխատանքներն իրականացնելու մասին» N 51-Ա/1 հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

««Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ տնօրենին՝

ա. մինչև սույն թվականի սեպտեմբերի երեսունը մշակել ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոններում աշխատելու (քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու) համար Հայաստանի Հանրապետության զբաղվածության ոլորտի գործառույթներ իրականացնող «Գործ» և համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում դիմումների միասնական հաշվառման տեղեկատվական ենթահամակարգերով աշխատելու կարողությունների ստուգման առնվազն թվով 25 գործնական առաջադրանք,

բ. մինչև սույն թվականի սեպտեմբերի երեսունը մշակել ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ներկայացնել Հայաստանի Հանրապետության մարզպետարանների սոցիալական աջակցության տարածքային գործակալություններում, Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Զեյթունի սոցիալական աջակցության տարածքային բաժիններում աշխատելու (քաղաքացիական ծառայության կամ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու) համար ընտանիքների անապահովության գնահատման «Նպաստ», սոցիալական դեպքի վարման, սոցիալական բնակարանային ֆոնդի կացարանների, բնակելի տարածության կարիք ունեցող անձանց տվյալների հաշվառման և համապատասխան հերթացուցակի ձևավորման և համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում դիմումների միասնական հաշվառման տեղեկատվական ենթահամակարգերով աշխատելու կարողությունների ստուգման առնվազն թվով 25 գործնական առաջադրանք:»

2) Հրամանը լրացնել նոր 3.1. կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.1. Սոցիալական ապահովության պետական ծառայության պետին՝ ծառայության աշխատակազմի տարածքային ստորաբաժանումներում կիրառվող տեղեկատվական ենթահամակարգերով աշխատելու կարողությունները ստուգելու նպատակով մինչև սույն թվականի սեպտեմբերի երեսունը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացնել.

1) դիմում ընդունող մասնագետների համար՝ «էլեկտրոնային կենսաթոշակ», մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի, ծննդյան միանվագ նպաստի, «Մայրության նպաստ», համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում դիմումների միասնական հաշվառման յուրաքանչյուր տեղեկատվական ենթահամակարգի վերաբերյալ առնվազն 2-ական գործնական առաջադրանք,

2) դիմում մշակող մասնագետների համար՝

ա. «էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական ենթահամակարգի վերաբերյալ՝ առնվազն 4 գործնական առաջադրանք, իսկ

բ. մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի, ծննդյան միանվագ նպաստի, «Մայրության նպաստ» տեղեկատվական ենթահամակարգերից յուրաքանչյուրի վերաբերյալ առնվազն 2-ական գործնական առաջադրանք,

3) հաստատող մասնագետների և խորհրդատուների համար՝



ա. «էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական ենթահամակարգի վերաբերյալ առնվազն 4 գործնական առաջադրանք,

բ. մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի, ծննդյան միանվագ նպաստի, «Մայրության նպաստ» տեղեկատվական ենթահամակարգերից յուրաքանչյուրի վերաբերյալ՝ առնվազն 2-ական գործնական առաջադրանք:»

2. Ուժը կորցրած ճանաչել Հրամանի հավելվածի 3-րդ կետի 4-րդ ենթակետը:

3. Հրամանով հաստատված հավելվածի 3-րդ կետից հանել «, սույն հրամանի 3-րդ կետով սահմանված գործնական առաջադրանքների թեմաների բաշխումը ներկայացված է սույն կետի 4-րդ ենթակետում» բառերը:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Ա. ԱՍԱՏՅԱՆ